ղովուրդն վիճակին յերևանու ըստ Օրինօքն հայաստանեաց հաւատարմաբար տանն հայոց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ և բարեվարք տանն Հայոց այսմ աւուր յունվարի ամսի մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Միքայէլ իշխան, ○
Մանուէլ Գծաղիր. ○

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս երկրորդ Տանուտէր, ○

Վրթանէս Կաղնոյ երրորդ Տանուտէր, ○

Գալստան կաղզվանոյ չորրորդ Տանուտէր։ ○

Օրինակ նամակի Սպարապետութեան։

ԳԼՈՒԽ ԿԲ.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան 'ի աշխարհէն վասպուրականի, և թուղթ փոխանորդութեան իւրեանց առ քեզ Տեառն Սիմէօն 'ի գեղջէն աղձնու, և երդմնիլն քոյ առաջի առենի տանուտերաց հայոց՝ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ, տուաք իշխանութիւն քեզ պաշտօն սպարապետութեան 'ի վերայ զօրաց հայոց ժամանակաւ երիս ամաւ, զի դու քաջախոհեան Սիմէօնդ աղձնու կացցես և մնասցես Սպարապետ և հրամայեսցես 'ի վերայ